47 տող է։ Վերջին օրերս մի թանգագին հնութիւն ևս յայտնուեցաւ. մոգայիկ խաչի մի մաս։ Այս գիւտը կարևոր է այն պատճառով, որովհետև այդպիսի մոգայիկներ շատ հազուագիւտ են Հայոց մէջ, չմիշելով Երուսաղէմում մի քանի տարի առաջ հայերէն արձանագրութեամբ գեղեցիկ մոգայիկը, որ հրատարակուած է Zeitschrieft der Deutschen



Palästina-Vereins. Band. XVIII։ Հաւանօրէն Երուսաղէմի մոգայիկը աւելի ուշ ժամանակի գործ է քան Զուարթնոց եկեղեցուները։ Մոգայիկ խաչը շրջապատուած է մրտենու խաշոր և կանաչ տերևների մի պսակով։ Հայր Խաչիկը պատրաստում է իւր պեղումների և գիւտերի մանրամասն նկարագրութիւնը, որ ժամանակին կ՚հրատարակուի «Արարատում»։

ՁԵՄԱՐԱՆ ՄԱՑՐ ԱԹՈՌՈՑ

Օգոստոսի 20-ին ձեմարանի տեսուչ Տ. Կարապետ վարդապետ վերադարձաւ իւր ուսումնական ճանապարհորդութիւնից, որ ձեռնարկել էր մի խումբ լսարանական ուսանողների հետ։ Հայր տեսչի առաջնորդութեամբ երիտասարդ ուսանողները այցելել են Ուռիա, Արցախ և Սիւնեաց նահանգները և Գողթն գաւառի ու հին Նախիջևանի վերայով կրկին ձեմարան դարձել։

Ձեմարանի համար այս տարի նոր ուսուցիչներ են նշանակուած Մայր Աթոռի միաբաններից Արժ. Տեարը Եղնիկ վարդապետ՝ հայ լեզուի և գրականութեան, Յուսիկ վարդապետ Զոհրաբեան աստուածաբանական առարկաների, մաթեմատիքայի համար հրաւիրուած է Պ. Բուդաղեան, տարրին դասարանների ուսուցչի համար Պ. Աբրահամեան։

Սեպտ. 4-ին վերաբնութիւնները ու նոր ընդունուողների քննութիւնները վերջացան և տարրական աղօթքից յետոյ՝ դաս սկսուեցաւ։ Հոգևոր Տիրոջ հրամանով այս տարի ընդհանուր ընդունելութիւն չկար, որպէս բացառութիւն միայն ընդունուած են 35 հոգի։

ՏԱՃԿԱՀԱՅՔ

Խառն ժողովը գումարուելով գումարուեցաւ Ղալաթիոյ խորհրդարանին մէջ, Նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր և առենապետութեամբ Սահակ փաշա Ասլանեանի՝ հետևեալ կարգադրութիւններն ըրաւ.

Բաղէշի Առաջն. Տեղապահ Եղիշէ վարդապետի օգտակար պաշտօնավարութիւնը նկատողութեան առնելով, մերժեց հրաժարականը, և որոշեց գրել, որ անձնական տկարութիւնը դարմանելու համար թէև եռամսեայ արձակուրդ մը տրուած էր իրեն, սակայն ներկայութիւնը կարևոր ըլլալով հոն, յարմար առթի մը պէտք է յետաձգէ այդ արձակուրդը։

Ժողովը մերժեց նաև Վանայ այցելու հովիւ